

աջ եւ ձախ կողքերից որպէս շրջանակ, բարձրանում են ողորկ բուններով և ականթի զարդերի խոյակներով սրւնները, որոնց վերայ ձգուած է բեկուած կամարը: քով-թարը ծածկուած արմաւենիկը յիշեցնող բուսական զրաֆիկ զարդերով, անկիւններում այս զարդերի մէջ մի մի նուրբ կազմուածքով թռչուն, պէմքերն իրար ուղղած: Պէտք է ասել արուեստի այս անխ-

նիկան հազուադիւր է Հայոց մէջ և մահմեաական, պարսկական արուեստի ազդեցութեան հետքեր պէտք է համարել:

Դրասեղանի պահարանի մէջ գատուութեամբ են անհրաժեշտ գործիքներն ու անոթները, դանակ, մկրատ, թանաքաման, ջրամաններ:

ԿԱՐԵԴԻՆ ՍՐԲԵՊՍ. ՅՈՒՍԷՓԵԱՆ
(Շարունակելի)

ԴՐԱՄԱԳԻՏԱԿԱՆ

Ա Ր Շ Ա Մ Ի Դ Ր Ա Մ Ը

Հին գրամներու կարգին՝ ΑΡΣΑΜΕΣ (Արսամէս) վերաանութեամբ գրամ մը կը գտնուի, զոր կը նշանակեն գրամագէտք՝ Մովսէս Խորենացւոյ «Արշամ»-ին հետ, և կը գտան Փոքր Մովսէս հայ թագաւորներու կարգը, չիարենալով ուրիշ տեղ տալ անոր. բայց մանրամասն քննութենէ եւ խորազնին ուսումնասիրութենէ ետք կը համոզուինք, որ Արսամէսի ընծայուած այս գրամը կապագադովկիոյ և կամ՝ աւելի հաւանականորէն՝ կոմմաղենէի վրայ իշխող թագաւորներէն մէկուն կը պատկանի, ոչ թէ Հայոց, և ոչ իսկ Ոսրոյնի, որ այս անունով թագաւոր չի ճանչնար:

Դրամին առաջին կողմին պատկերը կը ներկայացնէ Արսամէսի աջ զարծած կիսանդրին, զլուխը զգակ (calotte) և արքայական ապարօշ: Այս զգակը՝ հակառակ վիկտոր Լանգլուայի⁽¹⁾ և Ե. Բարլոնի⁽²⁾ կարծեաց՝ «հայկական» չէ, այլ

լատին քահանաներու զգակին նման գլխադիր (coiffure) մը, որ ամբողջ մազերը կ'ընդգրկէ և ճակատէն խոպոպիկներ դուրս կուտայ, ինչպէս որ անձամբ ստուգած եմ այս պարագան:

Երկրորդ կողմը կը ներկայացնէ զէպի աջ վազող նիզակակիր ձիաւոր մը, որուն զլխուն վերեւ գրուած է՝ երկու տողի վրայ՝

ΒΑΣΙΛΕΩΣ
ΑΡΣΑΜΟΥ

այսինքն՝ «Արքայի Արշամայ»:

Այս ձիաւորը շատ մեծ նմանութիւն ունի կապագադովկիոյ Արիարամէս թագաւորին պղնձէ գրամին երկրորդ կողմին, ինչպէս կը շեշտէ Ե. Բարլոն իր յիշեալ պատուական գործին մէջ, երես CXCIII: Եւ կոմմաղենեցիք՝ Ն. քան զՔ. 140-ին՝ «Սամէս» անունով թագաւոր մը ունեցած են, որուն մայրաքաղաքն էր Սամսատ, Շամուշատ կամ Շամշատ, և որուն գրամին վերաանութիւնն է՝ ΒΑΣΙΛΕΩΣ ΣΑΜΟΥ, այսինքն «Արքայի Սամիայ»:

Կ. Յ. ԲԱՍՄԱՋԵԱՆ

(1) VICTOR LANGLOIS. Numismatique de l'Arménie dans l'antiquité. Paris, 1859:

(2) ERNEST BABELON, Les rois de Syrie, d'Arménie et de Commagène, Paris, 1890: